# վատ վերաբերմունք: ֆապիօյի պատմութիւնը




Québec

## Տարեց չափահաս վատ վերաբերմունքի օգնութեան գիծ

Վատ վերաբերմունքը կը ծագի այն պարագային, երբ վարքագիծ մը, խօսք մը, շարժում մը կամ պատշաճ կերպով գործելու բացակայութիւն մը՝ մէկանգամեայ կամ կրկնուող, տեղի կ՚ունենայ այնպիսի յարաբերութեան մէջ, ուր պարտադիր է վստահութեան գոյութիւնը անհատի, համայնքի կամ կազմակերպութեան հետ, և որ՝ դիտաւորեալ կամ ոչ դիտաւորեալ կերպով, վնաս կամ հոգեկան տագնապ կը պատճառէ չափահաս անձի մը։ [1]




**Ահա տարեցներու եւ տկար իրավիճակի մէջ գտնուող չափահաս անձերու դէմ վատ վերաբերմունքի յոթ տեսակները** [2]

հոգեբանական, ֆիզիքական, ֆինանսական կամ նիւթական, սեռային, իրաւունքներու խախտում, տարիքապաշտութիւն և կազմակերպական (խնամքի և ծառայութիւններու կառավարում)։
Այս տեսակները կը դրսևորուին երկու ձևով՝ բռնութիւն և/կամ անտեսում։

**Վատ վերաբերմունքը ճանաչելու որոշ նշաններ՝:**

- Անձը կը դառնայ տխուր, ինքնամփոփ կամ վախցած։
- Անձը կը դադրի մասնակցելէ հասարակական գործունէութիւններուն։
- Անձը ունի վնասուածքներ, որոնք չի կրնար բացատրել։





**Վատ վերաբերմունքը մեր բոլորին կը վերաբերի։**

Եթէ զգաք, որ ձեզ հետ վատ վերաբերմունք կը ցուցաբերեն, կամ եթե ականատես ըլլաք, զանգեցէք Վատ վերաբերմնութեան օգնութեան գիծ՝ **1-888-489-2287**

Այլ օգտակար աղբիւրներ՝

Գանգատներու և ծառայութիւններու որակի յանձնակատար՝ Քէպէքի տարբեր առողջապահական և հասարակական ծառայութիւններու հաստատութիւններուն մէջ
Համայնքային յարաբերութիւններու պատասխանատուներ ոստիկանութեան ծառայութիւններուն մէջ (բոլոր տարածաշրջաններուն մէջ)
Համայնքային իրաւաբանական կազմակերպութիւններ
Կապ հաստատեցէք 211-ի հետ

Եթե ձեր ապահովութիւնը վտանգի տակ է, զանգեցէք 911։

1. Ճանաչել և միասնական գործողութիւններ ձեռնարկել, Կառավարութեան գործողութիւններու ծրագիր՝ տարեց չափահասներու նկատմամբ վատ վերաբերմունքը կանխելու համար 2022-2027, MSSS, Յունիս 2022, բաժին 1.1, Վատ վերաբերմունքի սահմանումը, էջ 5։
2. Ճանաչել և միասնական գործողութիւններ ձեռնարկել, Կառավարութեան գործողութիւններու ծրագիր՝ տարեց չափահասներու նկատմամբ վատ վերաբերմունքը կանխելու համար 2022-2027, բաժին 1.2՝ վատ վերաբերմունքի տեսակները և ձևերը, էջ 7 https://publications.msss.gouv.qc.ca/msss/document-003402/

նկարագրի հեղինակ՝ Մագալի Բուդոն
Տեղեկատվական ծրագրի համակարգող՝ Լուիզ Բուզիտ
Մոնթրէալի հանրային առողջապահութեան տարածաշրջանային վարչություն, Հոկտեմբեր 2024